Ամանորյա ընկուզախաղեր

Ամանորին որոշ տեղերում ընկույզից պատրաստում են Չարխափան՝ չարը քշող, վախեցնող, չքացնող, խափանող: Վերցնում են 20 սմ և ավելի երկարություն ունեցող թելեր, մեկ ծայրը հագուցում՝ որքան հնարավոր է մեծ գլխով, դնում կեղևների արանքը և սոսնձում: Մի քանի այդպիսի ընկույզների թելերը կապում են իրար, որն էլ դառնում է «Չարխափան»: Հայ մարդիկ հավատում էին, որ այդ շրխկոցը «վախեցնում և քշում է չարին»:

Երեխաների սիրված խաղերից են եղել վեգը և ընկուզախաղերը:

✓ Գետնին փոքրիկ փոսեր են փորում, ապա հերթով, մեկը մյուսի հետևից, ընկույզը գլորում այնպես, որ որ առանց նշանակված գծից շեղվելու, ընկույզն ընկներ փոսի մեջ: Ում հաջողվում է անել, բոլոր գլորած ընկույզները նրանն են:

✓ Խաղացողները մի մետր տրամագծով շրջան են գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք-չորս մետր հեռավորությունից գցում են վեգերը (վեգի փոխարեն կարելի է օգտագործել մեծ ընկույզ): Եթե թեկուզ մեկն են շրջանից դուրս հանում, շահում են շարված բոլոր ընկույզները:

✓ Սեղանին կամ գետնին իրար զուգահեռ երկու շարքով շարվում են ընկույզներ: Խաղացողը, մի շարքի ընկույզները միջնամատի և բութ մատի միջոցով կտտացնելով, պետք է նշանառությամբ շարքից դուրս հանի մյուս շարքի ընկույզները: (Ի դեպ, պարզվեց, որ դա այնքան էլ հեշ չի կատարվում փոքրերի կողմից, այդ պատճառով փորձեցինք ընկույզը սահեցնելով նետել):

✓ Ընկույզը մատների շրջանաձև շարժումով պտտել: Կարելի է կազմակերպել մրցույթ՝ ում ընկույզն է երկար պտտվում: Կարելի է ընկույզը պտտել՝ երկու ձեռքերի ափերի մեջ առնելով այն ու ափերն իրար հակառակ ուղղությամբ շարժելով:

✓ Թելից կախված ընկույզը մոտեցնել բերանի մոտ այնպիսի հեռավորությամբ, որ նա կարողանա փչելով հեռացնել իր դեմքից: Փչել ինչպես կարճ, այնպես էլ՝ երկար շնչով: Սրանք վոկալ շնչառական վարժություններ են, որոնք կատարվում են նաև ստվարաթղթից պատրաստված «թիթեռնիկով»: Յ

✓ Թելից կախված ընկույզի թելը մատի վրա փաթաթելով կարճեցնել այնքան, որ մնա մեկ թզաչափ: Փորձել տարուբերելով իրար խփել ընկույզները: Խաղի ընթացքում թելերը փաթաթվում են, որն էլ բավական հետաքրքիր ու զվարճալի է դարձնում բավական դժվար խաղը:

✓ Խաղացողներից յուրաքանչյուրի ձեռքին թելից կախված ընկույզ է (թելի երկարությունը՝ մոտ 30սմ): Խաղացողները կանգնում են շրջանաձև, իրար բավական մոտ, ձեռքերը մոտեցնում են և սկսում անկանոն թափահարել այնքան, մինչև թելերը խառնվեն իրար: Ստացվում է շրխկան – չարխափան:

✓ Ընկույզներով, պնդուկներով, նշերով սեղանին պատկերներ ստանալ: Օրինակ՝ տուն, ծառ, ձնեմարդ, ծաղիկ, և այլն: Կարելի է ստեղծել փոքր թիմ, միասին ստեղծագործեն՝ պատկերներով ստեղծելով կտավ:

✓ Խաղավարը, մեկական ընկույզ բռնած երկու ձեռքերի մատներով, սեղանին թեթև հարվածում է տարբեր ռիթմիկ պատկերներ, որոնք խաղացողները փորձում են կրկնել: Ռիթմիկ պատկերները մեջընդմեջ փոխարինվում են ընկույզները արագ-արագ սեղանին կամ միմյանց թեթև հարվածելով: Կարող են զույգերով կանգնել իրար դիմաց և ընկույզներն իրար հարվածել: Խաղն հետաքրքիր կընթանա, եթե խաղացողները ընթացքում ստեղծագործեն՝ ստեղծելով ռիթմիկ վազմաձայնություն

✓ Որպես շրխկան, Չարխափանը կարող է ռիթմիկ շրխկոցով նվագակցել ունկնդրվող երաժշտությանը, կատարվող երգին, բանաստեղծությանը: Այն կարող է հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ մյուս՝ հարվածային, շրխկան, չիկչիկան նվագարանների հետ:
✓ Խաղացողների ձեռքին մեկական Չարխափան է: Պետք է խափանեն, քշեն ամեն տեսակ վատը, չարը, անցանկալին, խանգարողը: Որպեսզի ուրախ խաղ ստացվի, պետք է չիք անել, օրինակ, անուշադրությունը, ալարկոտությունը, շշմածությունը, և այլն, և դրանք ուղարկել կամ որևէ մեկին կամ՝ որևէ տեղ:
Այսպես կարելի է շարունակել, մինչև կհոգնեն կամ կպարզեն, որ այլևս ոչինչ չմնաց քշելու:

✓ Խաղի համար անհրաժեշտ է երկու փոքր պարկ կամ թաս: Թասերը դրվում են իրարից փոքր-ինչ հեռու, իսկ եթե տոպրակ է, ապա երկու

խաղացող են բռնում: Կազմվում է երկու թիմ, որոնցից յուրաքանչյուրը, մեկ շարքով իրար ետևից կանգնած, երկու մետր հեռավորության վրա կանգնում են թասերի դիմաց: Յուրաքանչյուր խաղացողի ձեռքին 5 ընկույզ է: Խաղի սկիզբն ազդարարնում է հրահանգով: Հաղթում է շատ ընկույզ նետող և շուտ ավարտող թիմը:

- ✓ **Ընկույզով քարկտիկ**

Փոքր չափի ընկույզներով կարելի է խաղալ քարկտիկ (երեխաներն այն անվանեցին պոպոքկտիկ): 10 ընկույզ վերցնել, լցնել ափի մեջ: Ընկույզները փոքր-ինչ վեր նետել, ձեռքի ափն արագ շուռ տալ այնպես, որ ընկույզներն ընկնեն ափի երեսին: Ընկույզների մի մասը կմնա ափի երեսին, որն ափի նույն շարժումով ափով պետք է բռնել: Ափի մեջ եղած ընկույզներից մեկը վերցնել ու մի փոքր վեր նետել, այդ ընթացքում շատ արագ վերցնել գետնին ընկած ընկույզներից մեկը: Այսպես հերթով հավաքել գետնին ընկած ընկույզները:
Խաղը բավական դժվար է թվում, բայց, կարող են խաղալ՝ անընդհատ խաղալով ու վարժվելով:

- ✓ Նշվածներից բացի կարելի է հորինել այլ ընկուզախաղեր: